**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք, ՀՀ
Լոռու մարզ, գ.Դարպաս, 3-րդ փող. 5, Հեռ. (0322)6-06-24 ,
darpas.lori@mta.gov.am

N 167
*31 հուլիս 2017թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նալբանդյան
Ձեզ ենք ներկայացնում Դարպաս համայնքի ղեկավարի թիվ 43-ից 48 որոշումները:
Առդիր՝ 1 ֆայլ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Արմեն Ալոյան**

*Կատ. Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Դ. Վարդանյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 43

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱԼԻՍԱ ՄԻՔԱԵԼՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ալիսա Միքայելյանի 2017թվականի հուլիսի 12-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 19 թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ և 6-րդ կետերով.

Որոշում եմ՝

1.Դարպաս համայնքի 5 փողոց 4 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Ալիսա Միքա-յելյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:
2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվա-պահին՝եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

20 __ թ. ____________
գ.Դարպաս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 44

## Ա.Ս.ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158, 159-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Արմե Սասունի Ծատուրյանի դիմումը՝

Որոշում եմ.

Դարպասի համայնքապետարանի բանվոր՝ Արմեն Սասունի Ծատուրյանին տրամադրել 2017թ-ի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդը ս/թ հուլիսի 24-ից մինչև օգոստոսի 18-ը ներառյալ՝ 20 աշխատանքային օր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

20 __ թ. ______________ ____
գ.Դարպաս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔ 3 ՓՈՂ. 5, (0322) 6-06-24

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

„ 20 „ հուլիսի 2017թ. N 45 .

## 06-033-037-015 ԾԱԾԿԱԳՐԻ ՔՈԹԵՋԸ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ/ ենթակետով և 32-րդ կետով և հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 27.10.2003թ-ի N 1073978 վկայականը, «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը, շինությունների բնութագրերը և Վաղինակ Աշոտի Հովհաննիսյանի դիմումը`*

որոշում եմ.

1. Տալ համաձայնություն Դարպաս համայնքի Վաղինակ Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող, 06-033-037-015 ծածկագրով գույքը որպես առանձին միավորներ տարանջատելու և հաստատել նրանց նոր փոստային հասցեները` համաձայն կից հատակագծերի` թիվ 1 և թիվ 2 հավելվածների

   ա/. 361.85 քմ. մակերես զբաղեցրած հողամասին, 46.44 քմ. քոթեջին և 3.96քմ. բաց պատշգամբին տրամադրել փոստային հասցե` գ. Դարպաս 2 փող. 6 նրբ. 8

   բ/. 56.11քմ. մակերեսով զբաղեցրած հողամասին և 10.73 քմ. սանհանգույցին տրամադրել փոստային հասցե` գ. Դարպաս 2 փող. 6 նրբ. 8/1

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կ.Տ. ԴԱՐՊԱՍ
համայնքի ղեկավար` Ա. ԱԼՈՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 46

### ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 06-033-0069-0005 ԾԱԾԿԱԳՐԻ ՍԱՄՎԵԼ ՎՈՂՈԴՅԱՅԻ ՔԱՌՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188 հոդվածով, ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի18-ի 912-Ն որոմամբ և հիմք ընդունելով 22.07.2014թ. հաստատված N22072014-06-0012 սեփականության իրավունքի գրանցման վկայականը, «Արտյոմ Սաքանյան» ՍՊԸ կողմից 06.06.2017թ. կազմված հատակագիծը և Սամվել Քառյանի կողմից 14.07.2017թ. տրված լիազորագրի լիազորված անձ՝ Դավիթ Հայկազի Քառյանի դիմումը.

Որոշում եմ.

1. Սամվել Վոլոդյայի Քառյանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկաբող հողամասում, այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 2016 թվականին ինքնակամ կառուցված՝ բնակելի տան 94.56քմ. մակերեսով առաջին հարկը, 104.5 քմ. մակերեսով երկրորդ հարկը, 7.9 քմ. մակերեսով բաց պատշգամբը, 55.8 քմ. ավտոտնակը և 18.03 քմ. պարիսպը ճանաչել օրինական:
2. Քաղ. Ս. Քառյանի կողմից սույն որոշման 1-ին կետով նշված շենք, շինությունների օրինականացման համար սահմանված՝ 326846 / երեք հարյուր քսանվեց հազար ութ հարյուր քառասունվեց/ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3.Դիմել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը սեփականության իրավունքը գրանցելու:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

20 __ թ. ______________ ____
գ.Դարպաս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 47

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԽԻԹԱՐ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Մխիթար Աբրահամյանի 2017թվականի հուլիսի 27-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 19 թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ և 6-րդ կետերով.

Որոշում եմ՝

1.Դարպաս համայնքի 2 փող, 3 նրբ, 2 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Մխիթար Աբրահամյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:
2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

20 __ թ. ____________ ____
գ.Դարպաս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 48

## Ս.Ֆ.ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158, 160 հոդվածների և 219 հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1599-Ն որոշումով և հիմք ընդունելով Ս.Ֆ. Թովմասյանի դիմումը՝

Որոշում եմ.

1.Դարպաս համայնքի «Նախադպրոցական ուսումնական հաստատության» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Սիրանուշ Ֆելիքսի Թովմասյանին տրամադրել 2017թ-ի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդը ս/թ օգոստոսի 03-ից մինչև սեպտեմբերի 06-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր:
2.Դարպաս համայնքի «ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի տնօրեն Սիրանուշ Թովմասյանին հիմնական արձակուրդային վճարից բացի վճարել լրացուցիչ միանվագ դրամական պարգևատրում ՝ 100000 (հարյուր հազար) դրամի չափով:
3.Սիրանուշ Թովմասյանի արձակուրդում գտնվելու ժամանակ պաշտոնակատար նշանակել դաստիարակ ՝ Արմենուհի Դավթյանին: Փոխարինելու ժամանակահատվածում Ա.Դավթյանին վարձատրել տնօրենի աշխատավարձի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

20 __ թ. ____________ ____
գ.Դարպաս